

BESTELL
30.5.99
8-9 V
P. SUPP

№ 127

ՔԱՅՈՒՆՆԵՐ ԱՂԻՐՈՒԹԻՒՆ
«ուղիարխոյ համար»
Տարեկան 10 Գր.
Վեցամսեայ 5 »
Սրբապատկանի հա-
մար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Աւերիկայի համար
Տարեկան 2.50 Գր.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

ՇԱՆՏՈՒՄ

R. P. Kalémkarian
(Autriche)

Mechitharistengasse W. 4
Vienna
на вѣстникъ
[аржумъ]
Варна.

Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Գրութիւնք ևս չեն տուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ 3. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՀԱՅՐ ԱՄԵՆ ՏԵՂ ՀԱՅ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ

Պարսկաստանի, Բուսանիայի, Եգիպտոսի և Բուլղարիայի բնիկ հայերը մի անսակ թշնամութեամբ են վերաբերվում դէպի հայկա- կան կեդրոններէն եկած այն եղ- բայրները, որոնք ազգային ճշգ- րութեամբ և լայն իրաւունքով տագորված՝ հային ամեն երկրի մէջ և ամեն երկրի տակ հայ համարելով՝ աշխատում են միա- համուռ ուժով առաջ տարի մեր վերածնութեան ծանր գործը:

Հասկանալի է որ մաքուր հայը չի կարող անտարբեր մնալ, երբ տեսնում է որ իրան շրջապատող հայութիւնը բացի եկեղեցուց՝ հա- յութեան ոչ մի նշոյլը չունի. ոչ լեզու, ոչ ազգային սովորութիւն- ներ և ոչ էլ դժբաղդ հայրենիքի համար զգայուն սիրտ: Բնական է և այն, որ այդպիսի մի հա- յութեան մէջ գաղափարական հայը իր ամբողջ էութեամբը պէտք է ընկնի ազգութեան այդ քարացած բեկորի վրա, շարժէ նրան և առաջ քշէ միացնելու աքորջութեան հետ:

Այսօր «Շարժում»-ին հասած թղթակցութիւններէն մենք տես- նում ենք որ Պարսկաստանի հա- յութեան փոսած և մեռելութեան պաշտպան մասը հալածում է նո- րեկ յառաջագէտ, եռանդուն հայ տարրին. որովհետեւ, վերջինը ճիգ է թափում պատուել պարս- կահային տիրող խառըր և բա- նալ այն շաւիղները, որոնք նրան պէտք է միացնեն ընդհանուր հայութեան հետ:

Նոյնը տեսնում ենք և Բուսանի- այում, գեռաւելի խիստ կերպով: Այստեղ, լեզու և ամեն մի հայ- կական յատկանիշ կորցրած հայու- թիւնը բոլորովին օտարացել է: Բուսանահայը ոչ միայն հալա- ծում է եռանդուն և գաղափարա- կան նորեկ հային, այլ և հակա- աակ է ամեն մի բանի ինչ որ զուտ հայկական է:

Այդ հայութեան մեծամասնու- թիւնը, իր ազգեցիկ ներկայա- ցուցիչներէն հետ, աւելի առաջ է

անցնում ասելով՝ մենք Լուսաւոր- չական բուսան քաղաքացիներ ենք. մեզ չէ հետաքրքրում Հա- յաստանը և իր ժողովուրդը:

Բուլղարիայում էլ կայ նոյն ե- բերոյթը, թէեւ աւելի մեղմ կեր- պով: Այսօր ամեն մի հայաբնակ քաղաքում, ուր կան և դրսից ե- կած հայեր, տեսնում ենք որ բնիկ հայութեան փոսած և լրքա- ցած մասը՝ չինական պարխաէ կանգնեցնում իր այն նորեկ եղ- բոր առջև, որը տրամադիր է մտնել հասարակական գործերի մէջ և գործօն գեր խաղալ:

«Եկեղեցին մերն է, դպրոցը մերն է, իրաւունք չունիք խառ- նովելու» լսում է իր ատելի թուր- քերէն լեզուով նորեկ և գործելու տրամադիր հայը, և գլուխը քարշ արած հեռանում:

Բարեբաղդաբար նորեկ գաղա- փարական հայերին հալածողները հին սերնդից են. թէ Պարսկաս- տանում, թէ Բուլղարիայում և թէ մլտա տեղերում: Տեղական նոր սերունդը զգում է որ իրանք շատ են ետ մնացել և ենթար- կվում է նոր հոսանքին:

Ամեն տեղ էլ գաղափարական նորեկ հային մնում է հաւատա- րիմ մնալ այս նշանաբանին. «հայը ամեն տեղ հայ է. նրան պէտք է առաջ մղել դէպի ազ- գային վերածնութիւն» և շարու- նակ գործել ուժգին եռանդով:

Ոչ ոք իրաւունք չունի հային զրկել այդ սրբազան պարտաւա- նութիւնը կատարելու ջանքերից: Շատ շատ օգիտութեան խառըր իր բաժինը զոհեցը կը տանի: Իայց պարզ է որ առանց զոհի ոչ մի լաւ գործ չէ աջողվում:

Միշտ հայրենիքից կտրված գաղութները ենթարկվում են օտար տիրող տարրի ազդեցու- թեանը և օտարանում. եթէ մայր հայրենիքը անկարող է լի- նում բարոյական և նիւթական կապերով իրան հետ կապել նրանց: Մենք բացի վերածնու- թեան գաղափարի ուժից, որիչ ուժ չունենք դէպի մեզ քաջելու մեր գաղութներին:

Ամէն ճիգ թափենք գոնէ գա-

ղափարով մեր գաղութներին միացնել մեր հայրենիքի հետ: Այդ է պահանջում թէ հայու- թեան և թէ գաղութների շահը:

ՎԱՐԳՕ

ՍԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔԱՅՔԱՅՄԱՆ ԱՌԹԻ

Հայաստանի մանուկներ, Մայր մ'ունեիք անձնրէր, Ձեր այդ մայրն ալ բայսանեց Դաւան բուրջը անկրէր:

Այդ մայրն էր որ, կարգիս, Լոյս կը բաշխէր ձեր մրսիսն, Գրուեթի պէս յերկնից Գողանալով հուրն անկրէր:

Ձեռն շատեր մայրական Ահոր կարողը սնան, Որք, քայստիկ դարձան արդ՝ Խըւած գրկիսն սիրական:

Ձի ա՛յ չի կայ Միացեալն, Ձեր առկնուն սիրեցեալն, Ա՛յն ալ մեզի շատ սեսաւ Ազգիս դանիս անիւնայն:

Ձեր տունը ևս աւելի Յարկեր ձեզի պաշտի Վարժարաններ՝ փակուեցան, Դարձան այսո՛ր խոնկի:

Մտաւոր կեանքիս ձեր հայրեն, Որ ուղիքիս ձեր ֆայերն, Հալածեցին անիւնայ Արիւնարբու այդ գայլերն:

Ու դո՛ս, արցունք ձեր դիմքը Դրպրոցներուն սուրբ շիմքը Տրտում երեսած կը հեծեք, Հաւրբուրեցիտը ցուրտ վիմքը:

Խրախոյս տո՛ւք, մանկունք դո՛ս, Մի քայիք գուր արսասուք, Ձեր հասակիս համար չե՛ք Յուսակրտուր շա՛ց ու սուգ:

Հապա՛ շալու՛ տեղ ի գուր՝ Վրեժխրեցիտը առե՛ք սուր, Դաճիսները ձեր մրսիսն Բնե՛ր անով օսե՛ք փշուր:

Նե՛նցեք զի՛րք ու զՔրի՛չ, Վրեճե՛ք սուր ու բրբի՛չ, Մարձի երգեր երգե՛ցի՛ք Դասե՛րնուդ տեղ անդորրից:

Ա՛յ ի՛նչ պի՛սք ձեզ սե՛ր քանակ, Ասկի վի՛րք սուր ու զանակ Կարկի՛ր յարե՛ք քարխե՛ցիք, Որ վրեժով կրչասնակ:

Ա՛յնք անարիւտ

ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍՉՈՒՔԻՅ

Վերջերս 9—10 օր Ռուսչուկ մնացի շատ բան տեսայ, շատ էլ լսեցի: Եթէ տեսած ու լսածներս լինէին զուտ անզական նեղ խըն- դիրներ, ընթերցողի գլուխը չէի ցաւեցնի... բայց որովհետեւ պատահածները բնորոշ են ընդ- հանուր հայկական տեսակէտից եւս, դրա համար էլ անհրաժեշտ եմ համարում գրել այդ մասին:

Ձե՛մ սիրում թատերական քրո- նիկ գրել, բայց այս անգամ թատերից սկսեմք:

Մայիս 1ին, շաբաթ երեկոյ ներկայացում կար: Խաղում էին Երուանդ Բ. «ազգային ուղերգու- թիւնը»:

Այս ուղերգութիւնն էլ նոյն- քան անհամ, կեղծ ու շինծու է, սրբան և բոլոր մեր պատմական կեղծ-դատական դրութիւնները: Խաղում էին ազգային դպրոցի բարձրագոյն կարգի աշակերտ- ները:

Այս է պատճառը, որ մենք գրում ենք այդ ներկայացման մասին:

Խաղացին այնքան, որքան կա- ռող են «աշակերտները»... դրա- նից տեղ չէր էլ կարելի պահան- ջել «աշակերտներից», մանա- ւանդ երբ խաղալու նիւթն ան- համ մի գրուածք է:

Ամէնից առաջ մի հարց: Ե՛րբ, ո՛ր երկրում տեսնած է աշակերտների 2—3 շաբաթ ժա- մանակը խել զատերից ու յառ- կացել ուժերից բարձր մի ներ- կայացման:

Կարող են պատճառաբանել, որ Զատական արձակուրդների ժա- մանակ է սկսած:

Դա արգարացում չէ: Արձա- կուրդը տրուած է հանգստութեան և ոչ թէ աւանց այն էլ ծանրա- բեռնած աշակերտական ուղեղ- ները անմարս, անճաշակ մի իւ- շոր գրուածք անդիր անելու հա- մար:

Այս տեսակէտով՝ զնասաբեր էր աշակերտների համար այդ ներ- կայացումը: Անելող ժամանակ

ունենին թող ինքնազարգացման համար զբաղուի՞նք :

Երկրորդ գիտությունն :

Եթէ նոյնիսկ երբեմն մանկավարժութիւնն ուսած, զարգացած ուսուցիչներ իրենց աշակերտներին բէժ են դուրս բերում, այն ժամանակ ներկայացնելու նիւթը լինում է «անպատճառ» ազայոց հասակին «համապատասխան» և ոչ, օրինակ, Ռասինից, Կորնէլից կամ Գէօթէից :

Միայն Ռուսչուկում չեն պատահում այդ երևույթները, այլ բոլոր հայ համայնքների մէջ :

Տեսաք, մի երեխայ դուրս եկաւ բէժ և մի այնպիսի ոտանաւոր ասաց, որ երբէք իր հասակին յարմար չէ . . . միայն վարժապետի ստրկեցրած ձեւերը կապկելու կրկնում է թուլակի նման . . .

Դա ցուցամոլութիւն է, որ, մեր կարծիքով, կատարում է ի վնասմատաղ սերնդի՝ ժողովրդի առաջ ուսուցչական մարմնի արժէքը բարձրացնելու համար :

Ներկայացման սրահը գտարկ էր. հասարակութիւնը չէր եկած : Եթէ չհաշտենք աշակերտները և ուսուցիչները (որ անվճար էին եկած), համազամ կարող ենք ասել, որ կամ արդիւնք չեղաւ կամ փաստ ունեցաւ այդ ներկայացումից դպրոցը :

Ինչո՞ւ գտարկ էր սրահը. ինչո՞ւ ժողովուրդը չեկաւ դէժ իր զատկները խաղը գիտելու . . .

Այստեղ արդէն պարզում է Ռուսչուկի հայերի մի հիւանդութիւնը, որ կազմում է ամբողջ հայութեան ցուրտ մի մասը : Սրահի դատարկութեան պատճառը միայն ժողովրդի անտարբերութիւնը չէր, այլ արդար «կուսակցական ոգին» :

Կրթութիւն, անվայել ու սեւ ձեւով է երևում կուսակցական նկարագրութիւնը Ռուսչուկի մէջ :

Գործակալներ, հոգաբարձուհիներ, գրադարանակալներ, թաղական, հանգանակութեան և ուրիշ բոլոր հարցերում ամէն տեղ ձեւը առաջ ցցում է սեւ կուսակցական ոգին :

Ինչ որ ձեռնարկում են նորհնչակեանները, հնարը հանդիսանում են իրր քանդող, իրր կատաղի հակառակորդ, գործ դնելով բազմաթիւ բոլոր ներքին և աննրբիլ հայհոյանքները . . . Երբ հին-հնչակեաններն են ձեռնարկում որ և է գործ՝ նորերն են ամէն հնայաւոր միջոց գործ դնում ապաւելու նրանց ձեռնարկը :

Կիրքը, աչտոտ կուսակցական կիրքը պտըտում է միայն անհատների անուշները շուրճ և վնասում ամէն մի օգտակար ձեռնարկի :

Այսպէս՝ վիժեց յօգուտ Ձէյթուհի սովեւիների սկսելիք հանգանակութիւնը. վիժեց այս ներկայացումը և այլ շատ ձեռնարկներ :

Որ սրճարանը, որ տունը մըտ-

նէք, միշտ «Նազարէկեաններին» և «Արփարակեաններին» ամենատնայելի վէճերի կը հանդիպէք : Իսկ այդ ամէնի կողքից անվերջ ատելութիւն ու բողբոջ դպրոցի անօրէնի գէժ :

Կրքերն այնքան են ամեւ, որ երկու հակառակորդ կողմերը չեն ուզում ոչ մի լաւ յատկութիւն ընդունել իրար մէջ :

Անտարագիր սպառնալիք, փողոցային բամբասանք ու լուտանք . . . քիչ կրթած մարդու լսողութիւնն անգամ վիրաւորում է . . .

Սեւ կիրքը խօսում է ամէն տեղ, մտնում է ամէն գործի մէջ :

Սրանով Ռուսչուկը հայութեան վատ կրքի մարմնացումն է հանդիսանում :

ԳԱՍՊՍՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձեյլա, 25 Ապրիլ

Ծովեղբերից դէպի Հարար և Հարէչստանի խորքերը տանող ամենաբարձուկ ճանապարհն է Ձէյլայի ճանապարհը՝ որ ձիրուտիին մօտ 25 մղոն դէպի հարու է ընկած : Միեւնոյն ուղղութեամբ և միմեանցից համարեա միեւնոյն հեռաւորութեան վրայ դուրսում են նաեւ Պէրպէրա և Պուհար նաւահանգիստները, որոնք նոյնպէս ճանապարհ ունին դէպի Հարար : Ձէյլա, ինչպէս նաեւ Պէրպէրա և Պուհար ակելի հին գոյութիւն ունին քան թէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (3)

Ի. ՎԱԶՈՎ

ՊԵՆՍԻՆԵՆ

(ԻՐԱԿԱՆ ՎԵՊ ՀԱՅԴՈՒԿԻ ՄԸ ԿԵՍՆԵՒԷ)

Քառորդ ժամ վերջը, չօրպածի նէսօի բակը մտան երկու ստուերներ. ասոնց ետեւէն մեծ ու նոր գուռը ամուր կղպուեցաւ : Ասոնք զապթիէն և Սլավչօի կիներն էին : Ասանց շըչուկի սանդուխին քովէն անցնելով՝ զապթիէն մտանի՞ր դռան մտնեալով՝ ձայնեց : Դուռը բացուեցաւ. կիներ ներս մտաւ. իսկ զապթիէն ի՞նչ նորքէն իր անջի պաշտօնը կատարելու, դուռը հսկելու :

Սլավչօ իր սիրատենջ նայուածքը ուղղեց կիներն և ըսաւ աղէկէզ ձայնով :

— Բարի ես եկեր, Վլքանա,

— Սլավչօ, Սլավչօ, աս ալ տեսնալու արժանացայ : Աստուած իմ, աս ինչ ցաւ էր որ զխուս եկաւ. լալաղին և սրտաճմրկ ձայնով մը ըսաւ կիներ, յուսահատաբար ձեռքերը չփեղով :

— Հոգ մի ըներ, սիրելի Վլքանաս, բան մը չը կայ :

— Ուրեմն ինչո՞ւ զիս կանչեցիր, հարցուց կիներ արտասուելով :

— Քեզ տեսնալու համար, կիներ, գուցէ մեր վերջին տեսութիւնը ըլլայ :

— Ախ, ամուսինս, քաջ ամուսինս,

կողկողաղին ճըչաց Վլքանա :

— Մեր գտնուելը, Վլքաքօ, ի՞նչպէս է :

— Ծատ աղէկ է, ասող է :

— Դու ի՞նչ կընես, ի՞նչպէս կապրիս :

— Մի հարցուներ, Սլավչօ, այլ ըսէ. ի՞նչպէս եղաւ որ այս ապիրատները քեզ ձերբակալեցին : Ո՞վ դիտէ ինչ ամանջանքներ պիտի քաշես այդ հրէչներու ձեռքէն, կըսէր Վլքանա առանց քաշուելու թուրքի ներկայութեանէն : Անմէտ աղան որ լաւ պուրկարեղն գիտէր, երկու ամուսիններու մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը բառ առ բառ հասկցաւ և ըսաւ :

— Էհ, ի՞նչ կը մոմաք, Սլավչօ, ինչ որ ըսելիք ունիս ըսէ. ալ ժամանակ չը մնաց կոծ ու հոտաչանք լսելու :

— Վլքանա, քիչ մը մօտիկ, չընչաց Սլավչօ, աչքերը բոցավառելով : Վլքանա մօտեցաւ ամուսնոյն մտայոյզ աչքերով :

— Սլավչօ իրաչքերը սեւեռեց կնոջ աչքերուն վրայ և սկսաւ բան մը փսփսալ :

— Կեանք, զաղանի բան մը պիտի չը խօսիք. ես անպատճառ պիտի լսեմ ձեր խօսածը :

Այս ըսելով Անմէտ մօտեցաւ ամուսիններուն և անոնց քով կեցաւ :

— Վլքանա, գիտե՞ս ուր է Վկապոյս գետակը, զողովուրդն ձայնով ըսաւ Սլավչօ :

— Գիտեմ, Սլավչօ :

— Լաւ, նկատեց Անմէտ աղան, շարունակէ :

— «Կապոյս գետակ» զերի կողմը ժայռեր կան . . . դուրս լաւ սէտք է յիշես այդ տեղերը, մեր երախայ եղած ատեն, քեզի հետ խաղացած ենք :

— Դիտեմ, Սլավչօ, կը ճանչնամ այն մեծ քարերը . . . ըսաւ Վլքանա, բաւական զարմանալով այս անակղի հարցումներուն վրայ, որոնք բնաւ կսոյ չունէին ներկայ սակալի վիճակին հետ :

— Լաւ կը ճանչես այդ քարերը, այնպէս չէ՞ :

— Այո, կը ճանչեմ Սլավչօ :

— Լաւ, լաւ յարեց Անմէտ : Բայց յանկարծ, ակնթարթի մը մէջ, Անմէտ աղան երկու քայլ հեռու տապալեցաւ, և կոնակի վրայ իյնալով, գլուխը ուժգին կերպով գետին զարկաւ : Խորին լուսութիւն տիրեց : Թուրքը անշարժ էր. արեան բարակ ծորակ մը վազեց բերնէն և սկսաւ մարմինը ու գետինը ներկել :

Վլքանա բոլորովին ապուշ կրթած տեղն ու տեղը քարացաւ : Սլավչօ ամբողջովին կը դողար : Կատաղութեան փայլատակող աչքերով իր զոհին կը նայէր : Սլավչօ սպասելով յարմար վայրեանին, այսինքն Անմէտի մօտիկնալուն, իր հսկայ ատքով, ամբողջ ուժը ամփոփելով կատաղաբար զարկաւ թուրքի փորին :

Այս մահու և կեանքի ծրագիրը վաղուց պատրաստած էր. կնկանը հետ խօսած միջոցին այնչափ ճշգրտութեամբ որոշած էր իր ոտքի ուժը, որ թուրքը ճիշ մը իսկարձակել չը կրցաւ :

ձիրուտին : Մի ժամանակ Երկուտան կառավարութիւնն է սրանց վրայ իշխել. բայց հիմա անդլիական դրօշակն է միմիայն ծածանում : Այստեղ Երկուտանները շատ քիչ են. մի հատ միայն Անդլիացի կառավարիչ և մի երկու հատ էլ յոյն վաճառականներ. այդ է ընդամենը : Մնացեալները ընդի սօմալիներ, արաբ, հնդիկ և հրէայ են. թուով մօտ 5000 :

ձիրուտին և Ձէյլա միմեանց դէժ ապաստանի երկու քաղաքներ են՝ երկու հակառակ կառավարութեանց տակ : Երբ մինի բնակիչը ուզում է խոյս տալ իր վրայ ծանրացող յանցանքից, իսկ կոյն միտս սահմանէ է պնդում և ազատվում կառավարութեան հետապնդումից :

Այստեղ էլ երկիրը միեւնոյն տեսքը ունի ինչպէս ձիրուտի. միեւնոյն չոր ու ցամաք հողը, միեւնոյն կիղիչ արեւը. իսկ ապրուստը երկուայնների համար էլ աւելի անտանելի է քան ձիրուտիում՝ ուր գոնէ շնորհիւ երկաթուղու շինութեան դէպի Հարար, օրէ օր աւելացող եւրօպացիները ստեղծել են նաեւ ապրուստի մի քանի գիւրու-թիւններ : Այնու ամենայնիւ, Սօմալին ոչ մի նեղութիւն չի քաշում. նա իր խոտէ խոճիկում, ուր մի անկիւնում կիներ հաց է եփում իսկ միտում խտտերի վրայ երկայն ձգվում ու գըլ-խի մալերը շոյում է. այնքան

Այստեղ էլ երկիրը միեւնոյն տեսքը ունի ինչպէս ձիրուտի.

միեւնոյն չոր ու ցամաք հողը, միեւնոյն կիղիչ արեւը. իսկ ապրուստը երկուայնների համար էլ աւելի անտանելի է քան ձիրուտիում՝ ուր գոնէ շնորհիւ երկաթուղու շինութեան դէպի Հարար, օրէ օր աւելացող եւրօպացիները ստեղծել են նաեւ ապրուստի մի քանի գիւրու-թիւններ : Այնու ամենայնիւ, Սօմալին ոչ մի նեղութիւն չի քաշում. նա իր խոտէ խոճիկում, ուր մի անկիւնում կիներ հաց է եփում իսկ միտում խտտերի վրայ երկայն ձգվում ու գըլ-խի մալերը շոյում է. այնքան

Այստեղ էլ երկիրը միեւնոյն տեսքը ունի ինչպէս ձիրուտի.

— Վլքանա, շուտ ըրէ, թուրքին հաթազանը ատ եւ կապանքներս կարելուս Սլավչօ կնոջը. կիներ յուշքի գալով իր կրքը սասանենց, ողբ-ուրուած ամուսնոյն գործած հերօսութեանէ՞ն զանի սիւնին կայկանդող ամուր չունենեք կարեց :

— Կեցիր միւսն ալ կարեմ, կըսէր քաջասիրտ կիներ, ուզելով կտրել և Սլավչօի ձեռքին կապանքները :

— Պէտք չը կայ, ըսաւ Սլավչօ եւ գերմարդկային ուժ գործածելով, կտրեց ձեռքի կապանքները :

Ազատուածին պէս նա սրացաւ Անմէտի գրկին վրայ. անոր գոտիէն հանեց երկու արծանակները, խրեց իր գոտիին մէջ. Վլքանաի ձեռքէն յափշտակեց հաթազանը խրեց թիւրքին կուրծքը և դուռը բանալով ըսաւ :

— Վլքանա, սպասէ. առաջ ես : Սուղուխներէն վեր դատկեց, քարեքաղաքի ճամբան պահող զապթիէն կը մրափէր և երբ արտազայլերու ձայնը ատու վեր ցատկեց ըսելով :

— Դու՞ն ես, Անմէտ աղա :

Սլավչօ երկար խօսելու ժամանակ չը թողուց. զապթիէն զլխուս ետ-թաղանով ստիպալի հարուած մը իջեցուց և ստիպ ու տեղը քնարուց :

Բակի դուռը կղպուած էր. չափազանց մուծ էր. Սլավչօ քիչ մը վարանեցաւ. վերջապէս չորքը լաւ մը զննելէն յետոյ, իր կիներ տարաւ մարաղին քովը. ցատկեց անոր ցած տանիքին վրայ. ձեռքը կնկանը մեկնեց, վեր քաշեց և երկու քնալ առանց ժամանակ կորսնցնելու

երջանիկ է իրան զգում, որքան չէր զգար՝ եթէ նրան փոխադրէին եւրոպական շքեղ բնակարան։ Բաւական է որ առատ իւր ունենայ մարմինն ու գլխի մաշկը օժիւտ ու մի քանի պտուղ էլ մոխրախառն թամպաքի՝ բերանը գցելու համար։ այդ էլ այնքան հեշտ է ձեռք բերել՝ որ միտք մաշկու շատ հարկ չը կայ։ Իսկ եթէ մի բան կայ, որը աւելի գութար է ձեռք բերել և որի համար աւելի շատ է՝ մտածում, դա այն է՝ որ իր թշնամի ցեղերից մինի փորձարէր դուրս թափի իր երկայն նիղախով։ Նա մանուսանգ մի սպիտակամորթ մարդու, և դրանով իրաւունք ունենայ իր գլխի երկայն մաշկերի մէջ շայլամի փետուրը իբր նշան ծածանելոց։ Այն ժամանակ բացի երջանիկ լինելուց, քաջութեան տիրոջն էլ իրան կը տան, ու իր ընկերները մէջ էլ նախապառլու լինելու շնորհը։

Ճիւղաւորի հայերը ամսոյս 13ին ընդհանուր հանգանակութեամբ երկու հարիւր ֆրանք հաւաքեցին իրենց մէջ և կ. Պոլսի Պատրիարքարանը ուղարկեցին՝ օգուտ Հայաստանի սովետաներին։ Թէև կարելի էր շատ աւելի հաւաքել, բայց շատ վտտ ժամանակի պատահեց. . . առևտուրը կանգնած, մի կողմից էլ ներուպայի գործարաններին պէտք է փոյ հասցնել ապսպրած ապ-

րանքների համար, այդ պատճառով էլ սնտուկներում աւելորդ փոյ չը գտնվելու համար այդքանը հազիւ հաւաքվեց. . . ի հարկէ այդ փոյը գանձանակ չի լինելու՝ որովհետև Գրիստոսի ասած աղքատի լուծային ոչ մի նմանութիւն չունի։ Ինչ անենք՝ թոյ սովատանջ հայերը իրանց բազդը լան՝ որ գործերը վատ գրութեան մէջ էին ու թոյ Աստուծոյ ազօթեն՝ որ մեր վաճառականներին մինի փոխարէն հազար տայ՝ որ իրանց էլ այդ հազարից մինը բաժին ընկնի։ Մինի խոստացած հինգ ֆրանքն անդամ քիչ մնաց որ խոյս տար մասնակցելու այդ գումարին, որովհետև մարդը մի ուրիշի հետ գատավարութիւն ունէր և դատը կորցնելու վրայ է (°)։ Ահա թէ որպիսի եղանակով բաժին են հանում իրանց ունեցածից բարեգործութեան համար մեր հարուստները։

Գ. ԱՐԱՐԵԱՆ

Պուրհիշ, 5 Մայիս

Վառնայի մէջ գումարուած միթիւնկի մասնախումբին կողմէ հրաւեր ստացանք Պուրհիշի մէջ ալ միթիւնկ կազմելու, սակայն ատիկայ անկարելի ըլլալով, մասնաւոր գումարումներով և առանձին առանձին բացատրեցինք առաջարկութեան ոգին ու նպատակը, և գաղթական հայութեան ստուար մեծամասնութիւնը հանեցաւ Տ. Մինաս Զեբաղի պատ-

ու իրան թեան Լահէյի Վեհաժողովին։

Յատկի է որ մի քանի կուսակցական պարտներ յարտուն ճիւղերով արդիւր ըլլալ ուղեցին հանգանակութեան, սակայն ոչ չամիտ մասը աշխատելով բուժեց գալթակազմ միտքերը, և վաթսուն ֆրանք հանգանակելով, զրկեց Վառնայի միթիւնկին մասնախումբին։

Յ. Պ. Թ. Պիպոնճևան

Ն. Ա. Մ. Ա. Ա. Ս. Ո. Ռ. Փ

Մեր յարգոյ բաժանորդներէն կը խնդրենք որ փութան «Շարժում»-ի երկրորդ տարուան բաժնեգրները զրկել մեզ, կամ վճարել մեր գործակալներուն։ Արդէն տարւոյն երեք ամիսը անցաւ, իրենց բաժնեգրները չը վճարող անձերու թերթերը պիտի ստիպուէք զագրեցնել։

ՔէթիՊիՊիճ, ՄԱՍ. Ա. Տ. Մ. — Նամակատունն ստացանք 27.80 ֆրանք, 4 ԱՐԼՕՎՕ, Ն. Գ. — Ստացանք 10 ֆրանք, Ա. Ա. Ն. շարժ կանոնադրապէս կը զրկենք մեր թերթերը պատրաստ ենք նամակատունը կորսուած թերթերը նորէն զրկել։

ՊՄԲ. «Փիւնիկ»-ի. — Յրդ թիւը չը հասաւ մեզ։

ՄԱՆՁԵՍԹՐՐ, Ն. Ստատ. Տ. Ա. Նիկո. — Ստացանք մեր զրկած պանքային չէքը, բայց հոս պանքան չընդունիր այդպիսի փոքրիկ գումարներ, կը խնդրենք պէտք եղածը նորիենցէք։

—)(—

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Այս շաբաթ զիշեր Սաէտինէնիէի սրահին մէջ պիտի ներկայացուի «Վանի Հերոսներ» թատերախաղը Վառնայի թատերական գաղթական խմբին կողմէ, որուն ամբողջ հասոյթը պիտի յատկացուի Վանի սովետաներուն։ Տ. Տօքթ. Փափաղեան և Տ. Քուրպէթեան պիտի հսկեն հասոյթին վրայ և պիտի զրկեն ամբողջ գումարը ուր որ անկ է, իր նպատակին գործածուելու համար։ Կը յուսանք որ ամէն հայ պիտի փութայ իր աջակցութիւնը նուիրել այս ձեռնարկին։

— Ռոտոսթոյի քահանաները անձրեւի համար գաշաը ազօթեւէ յետոյ, պիտի մը կը դնեն և կը խնդրեն ժողովուրդէն որ դրամ ձգեն հոն, որպէսզի իրենց ազօթքը կատարուի։ Այս դրամական գործողութեան ժամանակ, ամպերը որունք սկսած էին հաւաքուիլ, կծիկը դրեր են և խեղճ ժողովուրդը առանց անձրեւի մնացեր է. աէրտէրներուն վճարած դրամն ալ վրայ տալով։

— Յարութիւն փաշա Տասեան Սուլթանին նորագոյն շնորհքին արժանացու. . . աղգային ժողովը չը գումարելուն համար, իր հաւատարիմ ծառային շնորհած ականակուռ պատուանշանին վրայ, Սուլթանը իֆթիխարի ականակուռ պատուանշանն ալ շնորհեց. . . ինչան իր բարձր զօհունակութեան։

Թան փողոցը։ Նոյն միջոցին չուները սկսան հաջիլ. թիրեւս զարնուած զապթիւն ազազակած էր, կամ թէ սանդուխէն վար էր զլորուած։

Երբ խելացի անասունները արհամարհան անին, սկսան կատաղի կերպով հաջիլ. քիչ մը վերջը ամբողջ գիւղը որոտաց չունելու տոնոցէն. զի զը ամբողջովին ոտքի ելաւ. արթնցան նաև յօրպոճի նէտօնք։

Իշերը կանցնէր երբ մեր փութառակները հաւան Վաշքօ-Սէյօի մօտերը, Պալքանի ստորոտը, Սլափօ կիւնը Պէլի-Մէլ չը թողուց, համազուած ըլլալով որ իր սեղը կիւնը պիտի ենթարկուէր թուրքերուն վրէժխնդրութեանը. որովհետև կիւնը երբէք պիտի չը կրնար ապացուցանել իր անմեղութիւնը, Ահմէտ ազալին սպաննութեանը մէջ։

Սակայն չը մտածեցին թէ Վաշքանայի յանկարծակի փախուստը ինչ հետեւանք կրնար ունենալ։

Երկուքն ալ միեւնոյն զգացումէն զրդուած, միասին փախան։

Միայն, երբ արալոյսին նստեցան հանգչելու ըլլորներով չը շապատուած, ծառազարդ բարձրաւանդակի մը վրայ, յիշեցին թէ երբիսն առնը մոտեցր էին, բոլորովին ճակատագրին քմահաճոյքին. նա մօտիկ ազգականներ չունէր որ աղան վերցնէին խնամելու և սուսն ալ պահէին։ Վաշքան, թէև ամէն վտանգէ աղատ, շատ յուզուեցաւ այս պահ կսկիծէն։

— Ախ, Վաշքան, սուսն, ակամայ զգից Վաշքան։

— Սատանան ստնի սուսն, ըսաւ Սլափօ, իր արիւններուն կայերը խնամքով ամուրցնելով։

— Սլափօ դուն ապրանքի արժէքը չես գիտեր. ասոր համար ալ սուսն քիչի հաճելի չէ, նիկատեք Վաշքան. . . միթէ հայուկը սուսն ու սեղ գրեալ։

— Ինձի ցաւ պատճառողը Վաշքան է. . . Սատանան տանի քու սուսնը։

Սլափօ ծոցաւ, և ուշադրութեամբ աչքերը պարացուց ծառերուն տերեւներուն մէջ կարծես բան մը նշմարել ուզելով։

— Ես ալ Վաշքանի մասին կը խօսէի, այ մարդ. . . ո՞վ պիտի խնամէ այն թշուառը. այդ անիծած թուրքերը գանի կը սպաննեն։ Ախ, Սլափօ, ինչ ընելու է հիմակ։

— Ինչ ընենք, պիտի շարունակենք մեր ճամբան։

— Շարունակենք, ախ, Աստուած. . . բայց Վաշքան, մրմնջեց Վաշքան և ուզեց հեծկալ, բայց ամուսնոյն գաճակ նայուածքին հանգիւցելով լռեց։

Ըստ երեւոյթի Սլափօ խիստ ըլլալու պատճառ սուսնը. կամ թէ մի արտուր նախազգացում զինքը անհանգիստ կընէր։

Արշալոյսը բացուելու վրայ էր. աստուսեան զիխուրը մեղմորէն սկսաւ շարժել ծոռերուն տերեւները. խորին քունէն արթնցող բնութեան հետ անոր ազուակները մինչև իրենց ականջը կը հասնէին. կիսաքը զգացրնել կուտար իր նոր շարժումը։

Վաշքան Սէյօի աքաղաղները կը կանչէին իրենց վրդովիչ ձայնով և կը խօսէին մրափող բնութեան նիւնջը։ Հարկուծը սկսաւ ձեռնկիլ. լուսոյ յասակ և հաճոյատեսիլ ցուրը սկսաւ ներս թափանցել ծառերու ճիւղերէն. թուսն մը սուրալով եկաւ թառեցաւ ճիւղի մը վրայ և կ'երկրուց փախստականներուն գլխուն վերեւ սաղարթները, անհամբեր կերպով սպասելով արշալոյսի առաջին շողերուն որ իր անուշ ձայնովը նորածին օրը ողջունէ։

Պալքանը իր զարդարանքներով հրաշալի կերպարանք մը առաւ. լեւնային բնութիւնը իր թմբութեան արթնցած ամէն բան շարժման ու կերպանութեան մէջ գրաւ. երկիրը ամբողջ և Պուկարիոյ այդ շնախարհիկ վայրը իր զարդն ու արգաւանդութիւնը ընդունելու համար կը մաքստէին այդ խաւար սաւանը պատուելու։ Բայց զի խաղաղութիւնը վրդովուած չէր բոլորովին։ Միայն Սլափօ և Վաշքան տխուր խոհերու մէջ ընկղմած, անհանգիստ էին։ Բոլոր արարածները հողի և կանք աննելու համար ուրախ ու զուարթ էին. մինչ մեր բաղդի երկու հալածականները տխուր էին։ Ինչօ՞ւ. որովհետև կը լուսնար։

Մանր մտածումներ կը ճնշէին պանք. անորոյութիւն մը սեղմէր զիրենք, ցերեկը կը մտնէր և իրենք լուսն գլուխը անօթի, մերկ և հալածուած էին։ Վաշքան սիրտ պատուող սղեր կարծակէր. զրկուիլ իր երախայէն, իր միակ և

սիրելի Վաշքան, որ իր կեանքն ու հոգին էր. ինչ սարսափելի անշատոււ. չէր ալ համարձակեր Սլափօյի յօի յայտնելու իր ցաւերը։ որովհետև ան ալ տխուր էր, միեւնոյն խոհերով, զուցէ աւելի ծանր։

— Սլափօ, ինչօ՞ւ միշտ հետեւ կը գրիտես և ականջ կը դնես։

Իրօք Սլափօ շատ խոռված կերպով շատ հետուն կը նայէր։ Անոր հայտնուելուն ականջը վայր էր անհնէն չնչին շուկները լսել հետքէն։ Եւ խիստպէս Սլափօ զգաց կարի կանկամտոր շուկ մը։ Նստկանը նշան բրաւ որ լռէ, և ինքը ստիք ելաւ ու սկսաւ աւելի ուշի ուշով մտիկ ընել։

— Մտերը հովէն կը խոյտան, նիկատեք Վաշքան, Սլափօն հանգըստացնելու համար, խիստպէս ձայն մը առեր էր։

— Զէ, ոտքի ձայն է փսփսաց Սլափօ։

— Ոտքի ձայն, ինչ բաքի ձայն։ Վաշքան ալ ոտքի ելաւ և սկսաւ ականջ դնել։ Թեթեւ քամին շուտով որոշեց ձորերէն, ծառերէն և օդէն ելած աղմուկը։

— Ճիշդ է, կարծեմ կու գան։

— Եւ շատ հոգի կու գան, սուրցուց Սլափօ։

— Ո՞վ պիտի ըլլայ այս ասեմը, Սլափօ, յու գուած հարցուց Վաշքան։

— Ո՞վ պիտի բայ մեզի համար կու գան. . . զապթիւնները. կամացուկ մը պատասխանեց Սլափօ։

Թարգմ. Պ. Սիբիլճեան

— «Մշակ» կը հաղորդէ թէ այսուհետեւ ամուսնալուծութեան և հասի-չըհասի խնդիրները էջմիածնի Սինոդին մէջ պիտի քննուին: Էջմիածնի Պրոկուրորը կաթողիկոսին այս իրաւունքը շնչել կուզէր, և կը թուր թէ վերջապէս յաջողեցաւ, թէև «Մշակ» այս մասին բան մը չը կրնար գրել:

— Փոթիի հայաստանցի մշակները առաջը բուսկի հանգանակելով իրենց մէջ, մէկ բուսկին տուած են Փոթիի հայ քահանային, սրպէսզի անմահ Արծրունիի գերեզմանը օրհնէ. և ինը բուսկին շրկած են Հայաստանի օրբանցներուն:

— Մանթաշեան, Եղբ. Գէորգեան, Աւետիսեան և Ոսկանեան ռուսահայերը տարազարգծութեան ընկերութիւն մը կազմած են Տիֆլիսի մէջ մէկ ու կիւ միլիոն բուսկի գրամագլխով: Այս ընկերութիւնը նախապէս պիտի հիմնէ բամպակեղէն կերպաներու գործարան մը, որ իր տեսակին մէջ երկրորդը պիտի ըլլայ ամբողջ կովկասի մէջ: Գործարանը պիտի հիմնուի Տիֆլիսի մէջ:

— Հայաստանի գրեթէ ամէն կողմը երաշտութիւն կը տրեւէ: Վանէն, Սյուրգէն և Ուրֆայէն շատ տխուր լուրեր կուգան այս մասին: Պարսկաստանի Ուրմի քաղաքէն ալ կը գրեն թէ երաշտութեան պատճառով ամբողջ ժողովուրդը ալքատացած է և կը հեծէ պարտքի տակ: Գահանաները մերթ ընդ մերթ կազոթեն առանց արգիւնքի, բայց երբէք չեն մոռնար գիւղէ գիւղ իրենց պաղինները հաւաքելու:

— Պատրիարքարանի շրջանակէն ընդունուած մասնաւոր նամակէ մը կը տեղեկանանք որ կաթողիկոսը ծանր յանդիմանագիր մը զրկած է Օրմանեան Պատրիարքի: Սիսի կաթողիկոսական խնդիրը այսչափ երկարատեն ձգձգելուն համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Կիրակի կատարուեցաւ Վանայի քաղաքապետական ժողովի 16 անդամներուն ընտրութիւնը նմանը չը տեսնուած կանոնաւորութեամբ և օրինաւորութեամբ: Ընտրական նոր օրէնքին և կառավարութեան ազատական ըսկըզունքներուն շնորհիւ, օրինակելի եղանակով կատարուեցան ամէն ինչ: Ազատականաց որոշած անձերը ամենէն ալ ընտրուեցան: Ընտրուողներուն մէջ է Մ. Ռանքօֆ, որ երբեմն քաղաքապետութեան վարիչը ըլլալով, պարկեշտութեամբ և գործունէութեամբ նշանաւոր հանգիստացած է:

— Պուրկալի մէջ յոյն մը կասկածելով իր կնոջ հաւատարմու-

թեան վրայ, Օթէլլօի արժանի կատարութեամբ կրակ առաւ տունին և այրեց իր կինը և երկու զաւակները: Մարդը առարկական շոգենանով ուղեց փախչիլ, սակայն Վառնայի առջև առարկական հիւպատոսի միջոցով զուրս հանուեցաւ և ոստիկանութեան յանձնուեցաւ:

— «Նարոտնի Փրավա» իր վերջին թիւին մէջ նկարագրելէ յետոյ Վառնայի հայկական մեծ միթիւնը, ամբողջովին կը հրատարակէ Վեհաժողովին պատուիրակներուն զրկուած օրոշմագիրը:

— Մակեդոնական պատգամաւորներու ժողովը դուրսուեցաւ Սօֆիայի մէջ: Նախորդ բարձրագոյն կօմիտէն հրաժարեցաւ և նոր մը ընտրուեցաւ, որուն վեց անդամներէն չորսը պահեստի սպաներ են: Ժողովը իր կողմէն պատգամաւոր մը զրկեց Լահէյ պետութեանց պատուիրակներուն դիմելու համար Մակեդոնական ինքրի մասին:

— Մակեդոնական պատգամաւորական ժողովը կը բաղկանար 40 անդամներէ, որոնք կը ներկայացնէին 36 տարբեր կօմիտէներ:

— Նարոտնա-Չաղչիտա թերթը կը գրէ:

Մակեթոնական դօնկրէն շարժմէ մը ի վեր է որ Սօֆիայի մէջ տեղի կունենայ, կը մասնակցին մօտ 35 պատգամուորներ: Բոլոր սրտով աջակցութիւն պիտի ցանկայինք դօնկրէին, եթէ այս անգամ ալ, ինչպէս և անցեալ տարիները, հոն չը գտնուէին անհասանք, որոնք բոլորովին հեռի են գործին սրբութիւնը հասկնալէ, որուն համար զրկուած են, ինչպէս և չեն ըմբռնիր իրենց վրայ դրուած ծանր պարտականութիւնը:

Եւ իսկապէս մենք շատ կը զարմանանք որ այդ կօնգրէսին մէջ, որ ոչ մի օտար մարդ չը թողուր լսելու զինքը, շքով կընդունուի իրզօֆ մը, որ գեռ երեկ հրապարակաւ և պաշտօնապէս վարկաբեկ կընէր Մակեդոնական գործը մեծ հաճոյք պատճառելով մեր ժողովուրդի թշնամիներուն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՎԵՀԱՄԺՈՂՈՎ.— Յեղափոխական ընկերակազմները մեծ միթիւնկ մը ունեցան մայիս 6ին Լահէ, Գոնգորտիա սրահին մէջ, Խաղաղութեան Վեհաժողովին բացման առթիւ:

— Վեհաժողովին բոլոր պատուիրակները հասած են: Վեհաժողովի նիստերուն մամուլին ներկայացուցիչները ընկերայ չը պիտի ըլլան: Քանի մը հրապարակագիրներ միայն մուտքի տոմսակներ ստացեր են, ժողովին բացման ճառերը լսելու համար:

Ժողովը բացուելէն յետոյ նախ երեք յանձնաժողով պիտի ընարէ, որոնք պիտի կազմեն վիճարանութեան նիւթերու ծրագիրը:

1. Յանձնաժողովը պիտի զբաղի զէնընկեցութեան և պատերազմական ծախքերու շարքը որոշելու խնդիրով:

2. Յանձնաժողովը պիտի զբաղի պատերազմական օրէնքները կարգաւորելու խնդրով:

3. Յանձնաժողովը, որ ամենակարեւորն է գործնական տեսակէտով, պիտի ուսումնասիրէ միջնորդ դատարանի և կամաւոր միջնորդութեան խնդիրները:

Այս յանձնաժողովներու հաստատուելէն վերջը, Վեհաժողովին նիստերը պիտի ընդհատուին ութ օրուան համար, որպէս զի յանձնաժողովները ժամանակ ունենան լիակատար ծրագիր կազմելու: Յանձնաժողովներու անդամներուն պիտի արուին քաղաքական բնաւորութիւն ունեցող մասնաւոր «տօկիւմաններ և գրքոյկներ, որոնք որոշուած նիւթերու ուսումնասիրութեան իբր հիմք պիտի ծառայեն:

ՌՈՒՍԻԱ.— Կիներու միջազգային խաղաղասիրական ընկերութեան ռուսական մասնաճիւղը Ս. Բեդերսոյուրկի քաղաքային տան մէջ փառաւոր նիստ մը ունեցաւ տիկին Շարանօֆի նախագահութեամբ: Ժողովին մեծամասնութիւնը կիներէ էր կազմուած: Շատ սըրբալիր կերպով ընդունուեցան արտասանուած ճառերը և ռուսական նշանաւոր քաղաքներու և արտասահմանի կիներէն եկած ուղերձները:

— Ռուսական գրաքննիչը զըրաւեր է գերմանացի Շտէնգերի գրքոյկը, որ կը հարուածէր Ձէնընկեցութեան գաղափարը: Շտէնգեր խաղաղութեան Վեհաժողովին գերման պատուիրակութեան անդամներէն մէկն է:

ԹՈՒՐԿԻԱ.— Մեծ խոռովութիւններ տեղի ունեցած են Իփէքի մէջ: Ալպանացիք շատ դաշնութիւններ ըրեր են քրիստոնեայ ազգաբնակիչութեան դէմ: Սերպ կին մը սպաննուած է. գիւղէ մը այրուած: Քօսովայի վալին զօրքով գայած է յանցաւորները պատժելու:

— Պետութեանց գեւապանները միատեսակ ծանուցագրեր տուին բարձրագոյն դրան, շուտափոյթ պատասխան պահանջելով իրենց պահանջներուն, որ կը վերաբերին Պօլսոյ քարափին և մինչև անոր շինուիլ վերջանալը ապրանքի մաքսէն ազատ ներս մտնելուն:

ՖԻՆԼԱՆԴԻԱ.— Փոստայի ստորին կարգի պաշտօնեաները, առանց իմաց տալու, գործադուր ըրին: Փարիզցիները առաւուն իրենց նամակները չստացան: Այս դէպքին բացատրութիւնը պէտք է փնտռել ձերբազատի փոստայի և թէլեկրաֆի վերաբերեալ վերջին քուէարկութեան մէջ:

ԿՐ ՓՆՏՈՒՈՒՄ

Երկրայի Մթննի գիւղէն Սրայ Մանուկ Բիւլանեան, 29 տարեկան, մեծ ու սեւ աչքերով, սեւ պիտերով, երկար հասակով երիտասարդը, որ պանքայի ցոյցէն յետոյ Պուրկարիտ անցնելով անյայտ եղած է: Տեղեկութիւն ունեցողներէն կը խնդրուի գրիւ իմբագրութեանս:

ԿՈՒՋԱՊ ԶԱՐՍԱՆՎԱ

Գիւմրէ՛ք Մ. Թիւթիւնեան և Ընկ. Ի Ռուսոսք Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն Սօֆիա քաղաքի Պուրկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի տոմսակները: Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՆԱՐԺՈՒՄԱՅ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաև պրօշիւներ:

Գիւմրէք յոյժ գիւրամատչելի Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգուծութեամբ և փութով կը կատարուին: ԹԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՆԻՍԻՆ

ՎԱՐԴՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՔՈՒՍԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

(Գիւն 1 Ձրանգ)

Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՛ Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսոսք շայկ Մալախեանի սրճարանը:

ՊՕՐՍԱ

Վառնա 12 Մայիս

ՊՈՒՂՏԱՅ

Վազօն, լիպրա 55—58, հէքթօլ 8.80—9.20 ֆրանք
Արապա, լիպրա 55—60 հէքթօլ 9—10 ֆրանք

ԱՐԻԱ

Լիպրա 42—50 հէքթօլ 6—6.20 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վազօն, 55—57 լիպրա, 5.75—5.80
Առապա, 55—60 լիպրա, 6—6.10
Կիւնտէ 15—20 վազօն, 25—30 առապա կէլէքտէ տիր:

ՏԱՐԸ

Կիւնտէ 1—2 առապա կէլէքտէ տիր 58—60 լիպրա, 5.50—5.75 ֆրանք
Առապա մուսէլէսի նարոյէտն 21 ֆրանք հիսապը իլէ տիր:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна